ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՖՐԻԴԱ ՀՄԱՅԱԿԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»

մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աիդա Օնիկի Թովուզյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մնացական Միքայելի Մանուկյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արուսյակ Վաչագանի Հովհաննիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի ապրիլի 26-ին ժամը 12^{00}-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի մարտի 15-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: 21-րդ դարում առավել քան երբևէ պետության կայուն զարգացումն ու այդ գործընթացի առջև ծառացած խնդիրների հաղթահարումը պայմանավորված են տվյալ պետության կրթության ոլորտի առաջանցիկ զարգացմամբ և հասարակության կրթվածության մակարդակով: Կրթությունը դիտվում է որպես հասարակության կենսունակության ապահովման հիմնարար բաղադրիչ, իսկ պետության կրթական քաղաքականությունը՝ որպես ազգային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության կարևորագույն տարր: ՀՀ զարգացման պետական քաղաքականության մեջ գերակայությունների շարքում կրթությունը շարունակում է մնալ որպես ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող առանցքային գործոններից:

Կրթությունը հարափոփոխ ոլորտ է և բնութագրվում է նոր գիտելիքների, կարողությունների, հմտությունների անընդմեջ որոնմամբ, ստեղծմամբ ու փոխանցմամբ, որը ենթադրաբար պահանջում է մանկավարժների մասնագիտական փորձի և դասավանդման հմտությունների շարունակական կատարելագործում: Կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման, կրթության որակի ապահովման ու բարելավման գործընթացներում առանձնահատուկ կարևորվում է մանկավարժների՝ որպես ոլորտում փոփոխություններ իրականացնողների և այդ փոփոխությունների անմիջական ազդեցությունը կրողների դերը: Հետևապես, կրթության որակը բարելավելու և կրթության ոլորտի առաջանցիկ զարգացումն ապահովելու նկատառումներից ելնելով՝ ներկայումս մանկավարժների մասնագիտական պատրաստման ու վերապատրաստման գործընթացների կատարելագործումը կրթության ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է: Մանկավարժի մասնագիտական գործունեության բարդությունն ու բազմակողմանիությունը, այդ գործունեության շրջանակներում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները, ինչպես նաև կրթության որակի նկատմամբ ներկայացվող մշտափոփոխ պահանջները հաշվի առնելով՝ մանկավարժի մասնագիտական կրթությունն ու զարգացումը պետք է դիտարկել որպես շարունակական և ողջ կյանքի ընթացքում իրականացվող գործընթացներ:

Սույն ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է գիտելիքահենք հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններով, մասնավորապես՝ կրթության ոլորտի լայնածավալ բարեփոխումներով, կրթության որակի նկատմամբ թիրախային շահակիցների տարաբնույթ պահանջմունքներով, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմամբ ու կրթության կազմակերպման գործընթացներում դրանց հաճախակի կիրառմամբ, ինչպես նաև տնտեսության և հասարակության զարգացման գործընթացներում կրթության դերի առավել կարևորմամբ ու անհատի ողջ կյանքի ընթացքում ուսումնառության անհրաժեշտությամբ: 21-րդ դարում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և մշակութային փոփոխությունները պահանջում են

համապատասխանաբար բարեփոխումներ իրականացնել կրթության որակի ապահովման գործընթացներում՝ հաշվի առնելով կրթության՝ որպես պետության սոցիալ-տնտեսական զարգացումն ու մրցունակությունը ձևավորող գործոնի կարևորությունը: Իսկ կրթության որակը գնահատելիս նախ և առաջ հաշվի է առնվում սովորողների ակադեմիական առաջընթացը, որը պայմանավորված է մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետությամբ: Հետևապես կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումների առանցքային հիմնահարցերը պետք է վերաբերեն մանկավարժների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման գործընթացների բարելավմանն ու արդիականացմանը:

Կրթության ոլորտի զարգացումն ամբողջ աշխարհում ուղեկցվում է հիմնարար բարեփոխումներով, որոնց համատեքստում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հետազոտողների, մանկավարժների և կրթության կառավարիչների ուսումնասիրությունների առանցքում են մանկավարժների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման, մանկավարժական մոտիվացիայի, մանկավարժական կոմպետենտության բարձրացման, մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետության և սովորողների առաջադիմության փոխկապակցվածության, ինչպես նաև մանկավարժների մասնագիտական գործունեությանն առնչվող մի շարք այլ հիմնախնդիրները: Այնուհանդերձ, ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղություններն ու նշյալ գործընթացներում առկա հիմնախնդիրները համապարփակ ուսումնասիրության չեն ենթարկվել, մինչդեռ դրանք շարունակաբար խոչընդոտում են կրթության որակի բարելավումն ու կրթության ոլորտի զարգացումը: Սույն ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են նշյալ հիմնահարցերը, ու համապարփակ ձևով ներկայացվել են ՀՀ կրթության ոլորտում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները: Հարկ է նշել, որ աշխատանքում ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 1-5-րդ մակարդակներին անդրադարձ է կատարվել հանրակրթության ոլորտում մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեությանն ու դրան առնչվող հիմնահարցերը քննելիս, իսկ 6-8-րդ մակարդակներին՝ մանկավարժական մասնագիտական կրթության հայեցակարգային շրջանակը ներկայացնելիս:

Հետազոտության նպատակը ՀՀ կրթության ոլորտում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունների ուսումնասիրումն ու նշյալ գործընթացների բարելավմանն ուղղված գործողությունների պլանի մշակումն է:

Հետազոտության օբյեկտը ՀՀ կրթության համակարգում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներն են:

Հետազոտության առարկան ՀՀ կրթության համակարգում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղություններն ու դրանց հիմնախնդիրներն են:

Հետազոտության վարկածը: ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների արդյունավետությունը հնարավոր է բարձրացնել եթե.

- բացահայտվեն մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետությունը պայմանավորող գործոնները և դրանք հաշվի առնվեն մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացները պլանավորելիս և իրականացնելիս,
- վեր հանվեն մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում առկա հիմնախնդիրները, ու մշակվի և իրականացվի դրանց լուծմանն ուղղված գործողությունների պլանը,
- պետական և ինստիտուցիոնալ քաղաքականությունները միտված լինեն մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացների արդիականացմանը:

Հետազոտության խնդիրները: Սույն հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել թեմային առնչվող հայալեզու ու օտարալեզու մասնագիտական գրականությունը, ներառյալ ոլորտային ազգային և միջազգային հետազոտությունները,
- ուսումնասիրել մանկավարժական մասնագիտական ներուժի հայեցակարգային դրույթներն ու մանկավարժական մասնագիտական ներուժի էությունը,
- վերլուծել ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացները կարգավորող օրենսդրական դաշտը,
- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացներին առնչվող վիճակագրական ցուցանիշները 2008-2018թթ. ընթացքում,
- իրականացնել ուսուցիչների շրջանում հարցում՝ բացահայտելու ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները,
- մշակել ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների պլան՝ միտված կրթության որակի բարելավմանը,
- մշակել մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետության ապահովման մոդել:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են.

- *մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման հայեցակարգային դրույթները* (Боднар А.М., Божинская Т.Л., Бочаров В.Г., Девятова И.Е., Катербарг Т.О., Киселева О.О., Мясоедова Е.А., Подласый И.П., Позднякова О.М., Рассказов Ф.Д., Романова М.А., Шалунова М.Г.),
- *մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման կառուցակարգերը* (Божинская Т.Л., Зеер Э.Ф., Исаев И.Ф., Климов Е.А., Митина Л.М., Сластенин В.А., Уметбаев З.М., Ушачев В.П., Bransford J., Bubb S., Cochran-

Smith M., Darling-Hammond L., Earley P., LePage P., Lytle S., Mockler N., Timperley H., Villegas-Reimers E.),

- *մանկավարժական կրթության գործառութային շրջանակը և կազմակերպման մոդելները* (Асадуллин Р.М., Балакирева Э.В., Белозерцев Е.А., Гонеев А.Д., Дроботенко Ю.Б., Ильина И.В., Пашков А.Г., Фролов О.В., Brace G., Darmody M., Dembélé M., Livingston K., Musset P., Nash M., Schubert J., Schweisfurth M., Schwille J., Smyth E.),
- *մանկավարժական կրթության զարգացման միտումներն ու արդիականացման սկզբունքները* (Գրիգորյան Ա., Հարությունյան Ն., Адольф В.А., Жук О.Л., Кислинская Н.В., Никитина Н.Н., Buchberger F., Campos B., Kallos D., Korthagen F., Loughran J., Russell T., Stephenson J.),
- *մանկավարժի մասնագիտական գործառույթների և դերերի սահմանման մոտեցումները* (Թոփուզյան Ա., Дьяконов Б.П., Зеер Э.Ф., Игошев Б.М., Назарова С.Е., Сергеева Т.А., Уварова Н.М., Чекалева Н.В.),
- *կրթության կազմակերպման կոմպետենտային մոտեցման հիմնադրույթները* (Արնաուդյան Ա., Պետրոսյան Հ., Жук О.Л., Зимняя И.А., Павлова А.М., Радионова Н.Ф., Сыманюк Э.Э., Тряпицына А.П., Хуторской А.В.),
- *կրթության տեղեկատվայնացման հիմնադրույթները* (Ասատրյան Ս., Աստվածատրյան Մ., Ավագյան Լ., Գյուլամիրյան Ջ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Թոփուզյան Ա., Կարապետյան Ն., Շարխաթունյան Հ., Պողոսյան Լ., Вайндорф-Сысоева М.Е., Крайнова Е.А., Садова К.В., Тараканов А.В., Теплышев В.Ю., Трайнев В.А., Трайнев И.В., Guskey T.R.),
- *ոլորտային մի շարք ազգային և միջազգային հետազոտությունները* («Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և տնօրենների վերապատրաստման նպատակով մասնագիտական զարգացման կարիքների գնահատում» («Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ), «ՀՀ պետական դպրոցներում ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառության սոցիոլոգիական հետազոտություն» («Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ), Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ (ՀՊՄՀ), Effective Teacher Policies: Insights from PISA (OECD), ICT Competency Framework for Teachers (UNESCO), Teacher Policy Development Guide (UNESCO), Teachers and School Leaders as Lifelong Learners (TALIS), Teachers Matter: Attracting, Developing and Retaining Effective Teachers (OECD):

Հետազոտության մեթոդները: Հետազոտությունը կատարվել է որակական և քանակական հետևյալ մեթոդների զուգակցմամբ՝ գրականության տեսության վերլուծություն, օրենսդրության վերլուծություն, վիճակագրության վերլուծություն, ուսուցիչների շրջանում էլեկտրոնային եղանակով հարցաթերթիկային հարցումներ:

Հետազոտության բազա են հանդիսացել ՀՀ 10 մարզերի 44 դպրոցներ: Էլեկտրոնային հարցումն իրականացվել է «Survey Monkey» առցանց հարցման ծրագրի միջոցով: Էլեկտրոնային հարցմանը մասնակցել են 432 ուսուցիչներ:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

- «Մանկավարժական մասնագիտական ներուժ» եզրույթը բազմաբաղադրիչ հասկացություն է, ներկայացնում է մանկավարժի բնատուր ու ձեռքբերովի որակների համակարգային ամբողջությունը, որտեղ զուգակցված են նրա մասնագիտական և ընդհանրական գիտելիքները, կարողությունները, հմտությունները, անձնային որակները, մասնագիտական շարժառիթները, փորձն ու մանկավարժական գործունեության իրականացմանն անհրաժեշտ մի շարք այլ թաքնված և բացահայտ որակները՝ միտված մանկավարժի մասնագիտական գործառույթների արդյունավետ իրականացմանը:
- Մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն յուրաքանչյուրի անհատական մանկավարժական ներուժով, այլև այնպիսի պետական քաղաքականության առկայությամբ, որն ամբողջացնում է ուսուցիչների մասնագիտական պատրաստման ու վերապատրաստման, մասնագիտական աշխատանքի ընդունման, պահպանման, պարգևատրման և առաջխաղացման, ներդպրոցական կառավարման ու կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացներին առնչվող դրույթները:
- Կրթության լայնածավալ բարեփոխումների իրականացման համատեքստում մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներն անփոփոխ են մնացել, իսկ առկա մեխանիզմները խոչընդոտում են կատարողականի ցածր արդյունավետություն ունեցող մանկավարժների բացահայտումը, նրանց մասնագիտական կարիքների վերհանումը և անհրաժեշտ մասնագիտական աջակցության ցուցաբերումը:
- Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունների հստակեցումը, մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետությունը պայմանավորող գործոնների և այդ գործընթացում առկա հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղղված գործողությունների պլանի մշակումը ՀՀ-ում մանկավարժների մասնագիտական պատրաստման ու զարգացման գործընթացների արդյունավետությանն ու կրթության որակի բարձրացմանն անհրաժեշտ առաջնահերթ գործողություններն են:

Հետազոտության գիտական նորույթը:

- Ներկայացվել են **«մանկավարժական մասնագիտական ներուժ»** եզրույթն ու **մանկավարժական մասնագիտական ներուժի հայեցակարգային դրույթները՝** հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայալեզու մասնագիտական գրականության մեջ բացակայում են այս եզրույթի մեկնաբանությունները և դրան առնչվող համապարփակ ուսումնասիրությունները:
- Բացահայտվել են ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում առկա թերությունները, ու ներկայացվել է դրանց բարելավմանն ուղղված գործողությունների պլանը:

- Մշակվել է ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետության ապահովման մոդել, որն ամբողջացնում է սոցիալ-տնտեսական փոփոխություններով պայմանավորված գործոնները, ուսուցիչների մասնագիտական պատրաստման և զարգացման պետական քաղաքականությունն ու դպրոցի (ինստիտուցիոնալ) քաղաքականությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Մասնագիտական գրականության և գիտամեթոդական աղբյուրների համապարփակ ուսումնասիրության, ՀՀ-ում ուսուցիչների շրջանում իրականացված հարցման, մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացները կարգավորող օրենսդրական հիմքերի ուսումնասիրության, ինչպես նաև մանկավարժական մասնագիտական ներուժին առնչվող վիճակագրական ցուցանիշների վերլուծության արդյունքներով հստակեցված են մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները, մոդելավորված և վերլուծության են ենթարկված մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետությունը պայմանավորող գործոնները, համակարգված ու ամփոփված են ուսուցիչների մասնագիտական պատրաստման և զարգացման պետական քաղաքականության բաղկացուցիչները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել կրթության ոլորտի բարեփոխումների գործընթացներում և նպաստել մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, հետևապես նաև՝ կրթության որակի բարելավմանը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետության կրթական քաղաքականության մշակման և իրականացման, մանկավարժության և կրթության կառավարման մասնագիտության կրթական ծրագրերի մշակման ու բարելավման գործընթացներում, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացներում, ուսումնամեթոդական ձեռնարկներում, գիտահետազոտական աշխատանքներում և մանկավարժների մասնագիտական գործունեությանն առնչվող նախագծերում: Մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետության ապահովման մոդելը, ուսուցիչների մասնագիտական պատրաստման և զարգացման պետական քաղաքականությանն առնչվող դրույթները, ինչպես նաև մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների պլանը կարող են օգտագործվել կրթության քաղաքականություն մշակողների, կրթության կառավարիչների, մանկավարժության և կրթության կառավարման մասնագիտության կրթական ծրագրեր մշակողների, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ մշակողների ու վերապատրաստողների, մանկավարժների, ուսանողների, հետազոտողների և այլ շահագրգիռ կողմերի կողմից:

Հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմող գիտական աշխատությունների վերլուծությամբ, հետազոտության

նպատակին և խնդիրներին համարժեք մեթոդների համալիր կիրառմամբ, հետազոտության արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ, մեկնաբանմամբ և կատարված եզրահանգումներով:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 190 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները, ներկայացված են հետազոտության վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, հետազոտության բազան, հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորումն ու զարգացումը շարունակական կրթության համատեքստում»,** բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ ընդհանուր առմամբ քննարկվում են մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման հայեցակարգային դրույթները, մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների առանձնահատկությունները, ինչպես նաև մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացման մոտեցումներն ու եղանակները շարունակական կրթության համատեքստում:

Առաջին ենթագլխում՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման հայեցակարգային դրույթները», քննարկվում են «ներուժ» եզրույթի միջգիտակարգային սահմանումները և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ներուժ» եզրույթի սահմանման ու կիրառման, այդ եզրույթից ածանցված մնացյալ եզրույթների գործածության վերաբերյալ համընդհանուր մոտեցումը բացակայում է, սույն ատենախոսության շրջանակներում առաջադրվում է այդ եզրույթի հետևյալ սահմանումը՝ *այն որևէ ոլորտում անհատի, հասարակության, պետության՝ բացահայտ և թաքնված հնարավորությունների, կարողությունների, ռեսուրսների՝ հնարավորությունից գործողության անցման միջոցների հանրագումար է, որը կարող է զարգանալ կամ դառնալ իրական՝ առավելություն տալով այն կրողին:* Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման հայեցակարգային դրույթների վերլուծության հիման վրա սույն ատենախոսության շրջանակներում **«մանկավարժական մասնագիտական ներուժ»** եզրույթը սահմանվում է որպես *բազմաբաղադրիչ և դինամիկ երևույթ, որն ամբողջացնում է մանկավարժի բնատուր (անձնային որակներ, շարժառիթներ, գործունեության որևէ բնագավառի նկատմամբ հետաքրքրություններ և աշխատանքի ընդունակություններ) և ձեռքբերովի (մասնագիտական և անձնային որակներ) բացահայտ և թաքնված որակները՝ միտված մասնագիտական գործառույթների արդյունավետ*

իրականացմանը: Այս ենթագլխում առավել մանրամասն ներկայացվում են մանկավարժական մասնագիտական ներուժի կառուցվածքային բաղադրիչները, հատկանիշներն ու գործառութային բաղադրիչները: Ներկայացված է նաև ատենախոսության շրջանակներում մշակված՝ մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետության ապահովման մոդելը, որը բովանդակում է հետևյալ գործոնները.

- *սոցիալ-տնտեսական փոփոխություններով պայմանավորված գործոններ,* որոնցից են աշխատաշուկայի կառուցվածքային փոփոխություններն ու ուսուցիչների պահանջարկը ձևավորող գործոնները,
- *ուսուցիչների մասնագիտական պատրաստման և զարգացման պետական քաղաքականություն,* որն ամփոփում է ուսուցիչների մասնագիտական կրթության և զարգացման, աշխատանքի ընդունման, տեղափոխման, պահպանման, առաջխաղացման, աշխատանքից ազատման ընթացակարգերը,
- *դպրոցի (ինստիտուցիոնալ) քաղաքականություն,* որն ամփոփում է ուսուցիչների կառավարման քաղաքականությունն ու կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման և իրականացման ընթացակարգերը:

Հաշվի առնելով մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող վերոնշյալ գործոնները՝ կրթության ոլորտում պետության կարևորագույն խնդիրներից են դառնում՝ ա) ապահովել մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և շարունակական զարգացման անհրաժեշտ պայմաններ, բ) կառավարել մանկավարժական մասնագիտական ներուժն ու ապահովել վերջինիս գործադրման պայմաններ:

Երկրորդ ենթագլխում՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացները», ներկայացված են մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման հիմնական ուղղություններն ու պայմանները: Ենթագլուխը բովանդակում է նաև մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների հիմքը կազմող մասնագիտական կայացման գործընթացի առանձնահատկությունները, այն ձևավորող հիմնական փուլերն ու շարժառիթները: Այս ենթագլխում քննարկվում են նաև մանկավարժի մասնագիտական պաշտոնուղու բնութագիրը և այդ ընթացքում նրա մասնագիտական կայացման դժվարություններն ու խոչընդոտները, դրանց պատճառներն ու հաղթահարման եղանակները:

Երրորդ ենթագլխում՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացման մոտեցումներն ու եղանակները շարունակական կրթության համատեքստում», ներկայացվում են ուսուցիչների մասնագիտական զարգացման նպատակները, ինչպես նաև հիմնավորվում է ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթական բարեփոխումների փոխկապակցվածության կարևորությունը: Դիտարկելով ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու մոտեցումները շարունակական կրթության համատեքստում՝ այն ներկայացվում է մասնագիտական զարգացման ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ եղանակների զուգակցման միջոցով: Այս ենթագլուխը

բովանդակում է նաև ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման սկզբունքները, ինչպես նաև այդ ծրագրերի գնահատման անհրաժեշտությունը պայմանավորող գործոնները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Մանկավարժական կրթությունը որպես մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման հիմք»,** բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ ընդհանուր առմամբ քննարկվում են մանկավարժական կրթության նպատակներն ու գործառույթները, կազմակերպման մոդելներն ու դրանց առանձնահատկությունները, արդիականացման սկզբունքներն ու զարգացման միտումները:

Առաջին ենթագլխում՝ «Մանկավարժական կրթության գործառութային շրջանակն ու կազմակերպման մոդելները», ներկայացվում են մանկավարժական կրթության՝ որպես կրթության համակարգը ձևավորող ենթահամակարգի հիմնարար նպատակներն ու դրանցից բխող գործառույթները: Այս ենթագլխում քննարկվում են մանկավարժական կրթության կազմակերպման զուգահեռ և հաջորդական մոդելներն ու դրանց առանձնահատկությունները: Ենթագլխում ամփոփված է նաև «Մանկավարժական պրակտիկան մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում» վերտառությամբ ենթաբաղադրիչը, որը բովանդակում է մանկավարժական պրակտիկայի գործառույթներն ու առանձնահատկությունները, հիմնավորում մանկավարժական կրթության ընթացքում շարունակական մանկավարժական պրակտիկայի կարևորությունը և ներկայացնում ՀՀ-ում մանկավարժական պրակտիկայի բարելավման ուղիները:

Երկրորդ ենթագլխում՝ «Մանկավարժական կրթության զարգացման միտումներն ու արդիականացման սկզբունքները ՀՀ կրթության համակարգում», ներկայացվում են մանկավարժական կրթության զարգացման հիմնական միտումները՝ շարունակական կրթություն, կրթության հումանացում, հումանիտարացում, ժողովրդավարացում, ինտեգրում, ինտենսիվացում և տեղեկատվայնացում: Քննարկվում են նաև մանկավարժական կրթության արդիականացման հետևյալ՝ կոմպետենտային մոտեցման, մշակութահարմարության, ուսանողակենտրոն մոտեցման, կոլեգիալ որոշումներ ընդունելու, բազմազանության, փոփոխություններին արձագանքելու, նորարարության, մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և այլ ուսումնական հաստատությունների միջև համագործակցության սկզբունքները: Այս ենթագլուխն անդրադառնում է նաև վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում մշակված՝ մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգերին և մանկավարժական կրթության արդիականացման գործընթացում դրանց դերակատարությունը:

Երրորդ ենթագլխում՝ «Կոմպետենտային մոտեցումը մանկավարժական կրթության կազմակերպման գործընթացում», քննվում են մանկավարժական կրթության կազմակերպման գործընթացում կոմպետենտային մոտեցման ներդրման հիմնահարցերը: Այս ենթագլխում ներկայացվում են 21-րդ դարում մանկավարժին հատուկ դերերն ու կոմպետենցիաների շրջանակը: Վերջինս բացի դասավանդողից,

հանդես է գալիս նաև որպես սովորողի համաձևավորող, ֆասիլիտատոր (հեշտացնող), հետազոտող, մեթոդաբան, կառավարիչ, նորարար, մենթոր, վերահսկող, օգնող (աջակցող): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդլայնվել է մանկավարժների դերային շրջանակը, ինչպես նաև համալրվել է մանկավարժների կոմպետենցիաների շրջանակը՝ այս ենթագլխում համապարփակ ձևով ներկայացվում են նաև մանկավարժների մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաները:

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների առանձնահատկությունները ՀՀ-ում»,** օրենսդրության վերլուծության, վիճակագրության վերլուծության և ուսուցիչների շրջանում անցկացված էլեկտրոնային հարցման արդյունքների ու էմպիրիկ տվյալների հիման վրա ներկայացվում են ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների առանձնահատկությունները, այդ գործընթացներում առկա հիմնախնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված գործողությունների պլանը:

Առաջին ենթագլխում՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորումն ու զարգացումը կրթության տեղեկատվայնացման գործընթացում», քննարկվում են կրթության տեղեկատվայնացման գործընթացում մանկավարժների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման հիմնահարցերը: Հաշվի առնելով մանկավարժագիտության բավականին նոր ուղղության՝ էլեկտրոնային մանկավարժության զարգացման հեռանկարներն ու կրթության կազմակերպման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները՝ այս ենթագլխում ներկայացվում են ուսուցչի տեղեկատվական և հաղորդակցական կոմպետենցիաների շրջանակն ու դրա ձևավորման և զարգացման եղանակներն ու հնարավորությունները մանկավարժների մասնագիտական պատրաստման և զարգացման գործընթացներում:

Երկրորդ ենթագլխում՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման իրավանորմատիվային հիմքերը ՀՀ կրթության համակարգում», քննվում են ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման իրավանորմատիվային հիմքերը ու դրանցում վերջին տարիների ընթացքում կատարված համապատասխան լրամշակումներն ու դեռևս առկա հիմնախնդիրները, որոնք համակարգային և ինստիտուցիոնալ լուծումներ են պահանջում: Այս ենթագլխում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման իրավանորմատիվային հիմքերի ուսումնասիրության միջոցով վերհանված բացթողումները և այդ գործընթացներում առկա հիմնախնդիրները հիմնավորվում են նաև 2008-2018թթ. ոլորտային վիճակագրական տվյալների վերլուծությամբ:

Երրորդ ենթագլուխում՝ «Ուսուցիչների մասնագիտական կրթության և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում», ամփոփված են ուսուցիչների շրջանում իրականացված էլեկտրոնային հարցումների արդյունքում բացահայտված այն հիմնախնդիրները, որոնք էապես խոչընդոտում են ՀՀ-ում կրթության ոլորտի առաջանցիկ զարգացումն ու մրցունակ մանկավարժների մասնագիտական

պատրաստման և զարգացման գործընթացների արդյունավետության բարձրացումը: Այս ենթագլխում էմպիրիկ տվյալների հիման վրա մշակվել է այդ հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների պլան, որը համակարգված է երկու խմբերում և ներկայացված է ստորև:

1.ՀՀ-ում մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացներում և մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերում անհրաժեշտ են մի շարք փոփոխություններ, որոնց թվում են.

- մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգի մշակում՝ ներգրավվելով ոլորտի շահակից բոլոր խմբերին,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ քաղաքականությունների լրամշակում և աշխատաշուկայի պահանջներին ու պահանջարկին, պետական կրթական չափորոշիչներին ու ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչներին համապատասխան կրթական ծրագրերի իրականացում,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերում ներգրավվելու մեխանիզմների ստեղծում և կիրառում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում և բովանդակային փոփոխությունների իրականացում, ինչպես նաև կամընտրական դասընթացների շրջանակի ընդլայնում և ուսանողներին ընտրության հնարավորության ընձեռում,
- ուսումնառության ընթացքում շարունակական մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և իրականացում, ինչպես նաև պրակտիկայի նկատմամբ հետևողական մոտեցման ցուցաբերում և օբյեկտիվ գնահատում,
- մանկավարժական պրակտիկայի ղեկավարներին ներկայացվող մասնագիտական պահանջների խստացում և այդ պահանջների շրջանակի ընդլայնում (գիտահետազոտական աշխատանքների տպագրություն, վերապատրաստումների մասնակցություն), ինչպես նաև ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի ղեկավարներին գնահատում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների առավել հաճախակի կազմակերպում և միջազգային առաջատար մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերի շրջանակների ընդլայնում,
- ուսումնամեթոդական նյութերի և նյութատեխնիկական բազայի կատարելագործում, այդ թվում տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցվածություն և կիրառման ընդլայնում, տպագիր և էլեկտրոնային ուսումնական պաշարների համալրում, ինչպես նաև հայալեզու որակյալ մասնագիտական գրականության ստեղծում,

- մանկավարժական կրթության կազմակերպում ուսուցման արդի և առավել արդյունավետ մեթոդներով՝ ուղղված ապագա մանկավարժների գործնական հմտությունների զարգացմանը,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գիտական և գիտաարտադրական գործունեության ընդլայնում և արդյունավետության բարձրացում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատությունների և դպրոցների միջև սերտ կապի ու շարունակական համագործակցության ապահովում, այդ համագործակցության շրջանակներում ապագա մանկավարժների համար ավելի հաճախակի դասալսումների կազմակերպում,
- նախագծային աշխատանքներ և հետազոտություններ իրականացնելու հմտությունների ձևավորմանը և զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում, ինչպես նաև հետազոտական աշխատանքներում ուսանողներին առավել հաճախակի ներգրավվում,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններին, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց դասավանդմանն առնչվող դասընթացների կազմակերպում,
- մասնագիտական զարգացման դպրոցների ստեղծում՝ միտված մանկավարժների մասնագիտական պատրաստման ու զարգացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ոլորտային հետազոտությունների իրականացմանն ու դասավանդման առաջավոր փորձի բացահայտմանն ու տարածմանը,
- ապագա մանկավարժների շարժունության խթանում և փոխանակման ծրագրերի շրջանակների ընդլայնում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողների գիտելիքների ստուգման մեթոդների և քննությունների կարգի վերանայում և խստացում:

2. ՀՀ-ում մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով՝ մանկավարժների մասնագիտական զարգացման գործընթացներում անհրաժեշտ են մի շարք փոփոխություններ, որոնց թվում են.

- կրթության ոլորտի բարեփոխումների պլանավորման և իրականացման գործընթացներում ուսուցիչների ներգրավվում և ոլորտի բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում համապատասխան միջոցառումների, այդ թվում նաև ՀՀ ԿԳՄՄՆ աշխատակիցների հետ հանդիպումների միջոցով,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների շրջանավարտներին աշխատանքի տեղավորման պետական քաղաքականության մշակում և իրականացում,

- դպրոցներում սկսնակ ուսուցիչներին մասնագիտական խորհրդատվության և աջակցության տրամադրման մեխանիզմների ստեղծում ու կիրառում,
- ուսուցիչների աշխատանքի ընդունման, ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացների թափանցիկության ապահովում,
- ուսուցիչների աշխատավարձերի և աշխատանքային բեռնվածության ու գրաֆիկների վերանայում,
- ուսուցիչների մասնագիտական զարգացման ու առաջխաղացման նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների մշակում ու կիրառում,
- վերապատրաստումներից առաջ ուսուցիչների կոմպետենցիաների գնահատում, մասնագիտական անհատական կարիքների բացահայտում և վերապատրաստման թեմաների ընտրության հնարավորությունների ընձեռում,
- ուսուցիչների վերապատրաստումների բովանդակային փոփոխությունների իրականացում և արդիականացում. կրթության ոլորտի առավել արդիական խնդիրների և դասավանդման առավել արդյունավետ մեթոդների քննարկումների կազմակերպում,
- առավել հաճախակի վերապատրաստումների կազմակերպում և վերապատրաստումների գրաֆիկի ճկունության ապահովում,
- վերապատրաստումների իրականացում ուսուցիչների առավել փոքր խմբերով,
- ուսուցիչների շարժունության և մասնագիտական զարգացման պայմանների շրջանակի ընդլայնում,
- վերապատրաստումների ընթացքում ուսումնառության ինտերակտիվ մեթոդների միջոցով փորձի փոխանակում և գործնական հմտությունների զարգացում,
- վերապատրաստումների անցկացում անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով ու տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով ապահովված լսարաններում՝ ուղղված մասնակիցների տեղեկատվական և հաղորդակցական կոմպետենցիաների ձևավորմանն ու զարգացմանը,
- վերապատրաստումների կազմակերպում դպրոցներում և ուսումնասիրվող մեթոդների կիրառում կոնկրետ դասարաններում,
- վերապատրաստող մասնագետների վերապատրաստումների իրականացում և առավել փորձառու վերապատրաստողների ներգրավվում,
- վերապատրաստումներ իրականացնող կազմակերպությունների ցանկի ընդլայնում և վերապատրաստողների կազմում համալրումներ. բացի առարկայական մասնագետից նաև մեթոդիստների, հոգեբանների, սոցիալական մանկավարժների ներգրավվում,
- պարտադիր առարկայական վերապատրաստումների պահանջի ընդունում,
- վերապատրաստող մասնագետների հետ հետադարձ կապի ապահովում և վերապատրաստումների գնահատման մեխանիզմների ստեղծում՝ պարզելու դրանց արդյունավետությունը,
- վերապատրաստումների բովանդակության մեջ հետազոտական բաղադրիչի հավելում,

- դասալսումների արդյունավետության գնահատում և կատարողականի ցածր ցուցանիշներ ունեցող ուսուցիչներին մասնագիտական խորհրդատվության և աջակցության ցուցաբերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնագիտական գրականության վերլուծության, ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման իրավանորմատիվային հիմքերի ու այդ գործընթացներին առնչվող վիճակագրական ցուցանիշների խորքային ուսումնասիրության, ինչպես նաև ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների շրջանում անցկացված լայնածավալ հարցման արդյունքները և էմպիրիկ տվյալները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական կրթության համակարգում առկա մի շարք բովանդակային և կառուցվածքային հիմնախնդիրները (դիմորդների ընդունելության պայմաններն ու ցածր միավորներ ունեցող դիմորդների ընդունելությունը, մանկավարժության մասնագիտության ոչ արդի կրթական ծրագրերը, դասավանդման և ուսման կիրառվող մեթոդների ցածր արդյունավետությունը, պրոֆեսորադասախոսական կազմի ոչ հաճախակի վերապատրաստումներն ու ոչ բավարար մասնագիտական կոմպետենցիաները, բուհերի ոչ հագեցած նյութատեխնիկական բազան, մանկավարժական պրակտիկայի արդյունավետության ոչ բավարար մակարդակը, գործնական հմտությունների ձևավորմանը նպաստող դասընթացների և հետազոտական աշխատանքների սակավաթիվությունը և այլն) բացասաբար են ազդում մանկավարժական կրթության որակի վրա:
2. Դիմորդների՝ մանկավարժ դառնալու շարժառիթների ու մանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ անձնային որակների համապատասխանության բացահայտման կարևորությունը թելադրում է մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում բակալավրիատի մակարդակում ընդունելությունն իրականացնելիս գրավոր քննություններից զատ անցկացնել նաև հարցազրույց:
3. ՀՀ-ում ուսուցիչների կոմպետենցիաների և մասնագիտական կարիքների գնահատման արդյունքների հիման վրա վերապատրաստումների կազմակերպումն ու դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակումը էապես կնպաստեն վերապատրաստումների և ուսուցիչների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:
4. ՀՀ-ում ուսուցիչների տեղեկատվական և հաղորդակցական կոմպետենցիաների ցածր մակարդակը խոչընդոտում է նրանց մասնագիտական զարգացմանն ու կրթադաստիարակչական գործընթացի որակի բարելավմանը, քանի որ դրանք

հիմնականում կիրառվում են գնահատականների մուտքագրման և սովորողների հաճախելիության հաշվառման գործընթացներում:

5. ՀՀ-ում ուսուցչի ցածր աշխատավարձը, սթրեսային և գերծանրաբեռնված աշխատանքը, դասերից հետո արտաժամյա աշխատանք իրականացնելու անհրաժեշտությունը, հասարակության մեջ ուսուցչի աշխատանքի ցածր վարկը, նյութական (խրախուսական վճարներ, մասնագիտական զարգացման նպատակով կատարված ծախսեր) և ոչ նյութական (ղեկավարության և գործընկերների կողմից աջակցություն, գովասանք) խրախուսման մեխանիզմների բացակայությունն ու ուսուցիչների մասնագիտական մոտիվացիայի ցածր մակարդակը խոչընդոտում են նրանց մասնագիտական գործունեության որակի բարելավումն ու մասնագիտական զարգացումը:
6. ՀՀ-ում ուսուցիչների աշխատանքի ընդունման, ատեստավորման, որակավորման տարակարգ ստանալու գործընթացներում չեն ստուգվում ուսուցչի գործնական հմտությունները, մինչդեռ ուսուցչի կողմից անցկացված դասի դիտումն ու քննարկումը կարող են բացահայտել վերջինիս գործնական հմտություններն ու մասնագիտական պատրաստվածության մակարդակը:
7. ՀՀ-ում ատեստավորման գործընթացում ցածր արդյունքներ ունեցող ուսուցիչների մասին որակական և քանակական տվյալների բացակայությունը փաստում է, որ նույնիսկ ցածր արդյունավետություն ապահովող ուսուցիչները շարունակում են իրենց մասնագիտական գործունեությունը, մինչդեռ այդպիսի ուսուցիչների և նրանց մասնագիտական կարիքների բացահայտումն ու լրացուցիչ մասնագիտական աջակցությունը կնպաստեն վերջիններիս մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:
8. ՀՀ-ում կրթական բարեփոխումների համատեքստում ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության և նրանց ներկայացվող մասնագիտական պահանջների միջև եղած անհամաձայնությունները թելադրում են նրանց մասնագիտական զարգացման կազմակերպման անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության ողջ ընթացքում:
9. ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում առկա հիմնախնդիրները պայմանավորված են ուսուցիչների մասնագիտական պատրաստման և զարգացման պետական միասնական քաղաքականության բացակայությամբ: Վերջինիս մշակումն ու կիրառումն էապես կնպաստեն մանկավարժի մասնագիտության գրավչության, հեղինակության, մրցունակության, մասնագիտական մոտիվացիայի մակարդակի բարձրացմանն ու մասնագիտական առաջընթացին:
10. ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը կարող են նպաստել նաև սույն հետազոտության շրջանակներում մշակված՝ մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետության ապահովման մոդելի, ուսուցիչների մասնագիտական պատրաստման և զարգացման պետական քաղաքականության բաղկացուցիչների հաշվառումն ու կիրառումը,

ինչպես նաև մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների պլանի իրականացումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում՝

1. Հակոբյան Ֆ., *«Մասնագիտական մանկավարժական ներուժի» հայեցակարգային դրույթների վերաբերյալ,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(41), Լինգվա, Ե., 2017, էջ 223-240:
2. Հակոբյան Ֆ., *Մանկավարժական պրակտիկան մասնագիտական մանկավարժական ներուժի ձևավորման և զարգացման համակարգում,* Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա (հումանիտար և հասարակական գիտություններ, դրանց դասավանդման մեթոդիկա), Միսմա, Ե., 2018, էջ 347-354:
3. Հակոբյան Ֆ., *Մանկավարժական կրթության զարգացման միտումներն ու արդիականացման սկզբունքները ՀՀ կրթական բարեփոխումների համատեքստում,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(45), Լինգվա, Ե., 2018, էջ 120-145:
4. Հակոբյան Ֆ., *Մասնագիտական մանկավարժական ներուժի դերը կրթության տեղեկատվայնացման գործընթացներում,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(45), Լինգվա, Ե., 2018, էջ 146-171:
5. Թոփուզյան Ա., Հակոբյան Ֆ., *Մանկավարժական կրթության հայեցակարգային շրջանակը և կազմակերպման մոդելները,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(49), Լինգվա, Ե., 2019, էջ 80-93:
6. Հակոբյան Ֆ., *Մանկավարժական ներուժի ձևավորման և զարգացման հայեցակարգային շրջանակը ՀՀ կրթության համակարգում,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(49), Լինգվա, Ե., 2019, էջ 94-109:

АКОПЯН ФРИДА АМАЯКОВНА

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ПЕДАГОГИЧЕСКОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ПОТЕНЦИАЛА В СФЕРЕ ОБРАЗОВАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 26 апреля 2021 года в 12^{00} на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, пр-т Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы: В целях повышения качества образования и обеспечения развития сектора образования совершенствование процессов профессиональной подготовки и переподготовки учителей в настоящее время является одним из основных направлений государственной политики в области образования Республики Армения. Актуальность темы обусловлена:

- изменениями в наукоемком обществе, в частности масштабными реформами в сфере образования;
- различными требованиями заинтересованных сторон к качеству образования, изменениями требований к профессиональной подготовке учителей;
- сложностью и многогранностью профессиональной деятельности педагога и изменениями, происходящими в рамках этой деятельности;
- развитием современных информационных и коммуникационных технологий и их использованием в образовательном процессе;
- повышением роли образования в развитии экономики и общества;
- необходимостью обучения на протяжении всей жизни.

Цель исследования: изучение направлений формирования и развития педагогического потенциала в сфере образования Республики Армения и разработка плана действий по совершенствованию указанных процессов.

Научная новизна исследования:

- Представлены термин **«педагогический профессиональный потенциал»** и **концептуальные положения о педагогическом профессиональном потенциале** с

учётом того, что в профессиональной литературе на армянском языке нет толкований этого термина и комплексных исследований, связанных с этим термином.

- Выявлены недостатки в процессе формирования и развития педагогического профессионального потенциала в Республике Армения и представлен план действий по их устранению.
- Разработана модель обеспечения эффективности деятельности педагогического профессионального потенциала в Республике Армения, которая объединяет факторы, обусловленные социально-экономическими изменениями, государственной политикой подготовки и переподготовки учителей и школьной (институциональной) политикой.

Теоретическая значимость исследования:

- определены направления формирования и развития педагогического профессионального потенциала;
- выявлены факторы, определяющие эффективность деятельности педагогического профессионального потенциала;
- систематизированы и обобщены компоненты, составляющие государственную политику по подготовке и переподготовке учителей.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть использованы:

- в процессе реформ образования, разработки и реализации государственной образовательной политики, разработки учебных программ по педагогике и управлению образования;
- в курсах профессиональной переподготовки учителей;
- в учебно-методических пособиях и научно-исследовательских работах;
- в проектах, связанных с профессиональной деятельностью педагогов.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений. Объем диссертации составляет 190 компьютерных страниц.

FRIDA HMAYAK HAKOBYAN

BASIC DIRECTIONS OF FORMATION AND DEVELOPMENT OF PEDAGOGICAL PROFESSIONAL POTENTIAL IN THE EDUCATION SPHERE OF THE REPUBLIC OF ARMENIA

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 "Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held on April 26, 2021 at 12^{00} at the session of the Special Board 020 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) on awarding degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: 0010, Yerevan, Tigran Mets Ave 17.

SUMMARY

The relevance of the research. Upgrading the processes of professional education and training of teachers is currently one of the main directions of state policy in the education sphere of RA as it is aimed to improve the quality of education and ensure the progressive development of the education sphere. The relevance of the research is conditioned by such factors as:

- changes in knowledge-based society, in particular, large-scale reforms in the sphere of education,
- different requirements of target stakeholders for the quality of education, as well as the changes in the requirements for professional preparation of teachers,
- complexity and versatility of teacher's professional activity and changes occurring within the framework of this activity,
- development of modern information and communication technologies and their frequent use in educational processes,
- increasing role of education in economic and social developments,
- the necessity of lifelong learning.

The aim of the research is to identify the directions of formation and development of pedagogical professional potential in the education sphere of the Republic of Armenia and to develop an action plan aimed at improving these processes.

The scientific novelty of the research.

- The term "pedagogical professional potential" and the conceptual provisions of pedagogical professional potential have been introduced, taking into account the fact that professional literature in Armenian lacks the interpretations of this term and the comprehensive studies related to it.
- The gaps in the processes of formation and development of pedagogical professional potential in the Republic of Armenia have been identified and action plan has been developed to fill them.
- A model has been developed to ensure the effectiveness of pedagogical professional potential in the Republic of Armenia, and it combines factors caused by socio-economic changes, state policy of teacher education and training as well as school (institutional) policy.

The theoretical significance of the research.

- The directions of formation and development of pedagogical professional potential have been identified.
- The factors determining the effectiveness of pedagogical professional potential have been modeled.
- The components of state policy on teacher education and training have been systematized and summed up.

The practical significance of the research. The research results can be used in:

- education reforms,
- development and implementation of state educational policy,
- development of educational programs in pedagogy and education management,
- professional training courses for teachers,
- educational-methodical manuals and scientific researches,
- projects related to the professional activities of teachers.

The structure and volume of the research.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, list of references and appendices. The volume of the dissertation is 190 pages.